

Ս. ՆԵՐՍԷՍ ԺՆՈՐՀԱԼԻ ԺԱՐԱԿԱՆՆԵՐԸ

(ԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆ ԱՍԻՐՈՒԹԻՒՆ)

ՆԵՐԱԾԱԿԱՆ ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Շնորհալիի մէջ բանաստեղծը երկու գիծով յայտնուած է. պատմական-նկարագրական («Վիպասանութիւն», «Ողբ Եղեսիոյ») եւ սրբազան («Յիսուս Որդի», «Բան Հաւատոյ», «Յաղագս երկնից եւ զարդուց նորա»): Այս ապրումները երկու տարբեր վիճակներու կը պատկանին, եւ կրնան նոյնիսկ խիստ դատումով՝ անջատուիլ իրարմէ եւ վերագրուիլ տարբեր անձերու, որովհետեւ ատոնք իր մէջ պատահաբար միացած կը թուին:

Սրբազան երզնի այս շնորհալի բանաստեղծը աստուածաշնչական տարրերու հետ սերտ առնչութիւն ունի, եւ անոնց մէջ ամէնէն տըպաւորիչը եւ յատկանշականը՝ «Յիսուս Որդին» կու գայ հոգեկան ապրումներէն, մարդկային զգացողութիւններէն, մեղքի եւ ցաւի մէջ տառապող մարդու մը անձկութիւններէն, փարելով աստուածային շնորհէն կաթող լոյսին եւ վերականգնող զօրութեան: Լոյսի եւ խաւարի երգ՝ բլխած սրտէ մը, որ աւելի մօտ է մարդուն, աւելի դիւրաւ թափանցելի, աւելի խաղաղ ու պայծառ հայեացքներով՝ քան Նարեկեան «ողբերգութիւնը», որ ալեկոծ մտքի մը թաւալումն է մեղքի կոհակներուն վրայ, որմէ կը ծնանի փոթորկուն համանուագ մը՝ թանձր գոյներով:

Զոյգ Ողբերգութիւնները (Շնորհալիի դործն ալ կոչուած է «Ողբերգութիւն»), ընդհանուրին մէջ՝ կը կառավարուին նոյն ոգիէն, իրենց նիւթին զօդով միացած իրարու. բայց կը տարբերին արտայայտութեան եղանակով՝ քանի որ զանոնք կերտող միտքերը խորապէս կը զանազանուին, իրենց նկարագրով եւ զգայնութեամբ։ Նարեկացիի խռովեալ մարդկութիւնը՝ Շնորհալիի քով հեղասահ եւ հանդարտ վերացումներ կ'ունենայ, թէեւ միշտ մեղաւոր մարդու, բայց լուսաւոր ճառագայթներով զուարթացած։ Այս սրբազան քերթողութենէն («Յիսուս Որդի»էն եւ «Բան հաւատոյ»էն) անցըր դէպի Շարականները՝ քայլ մըն է արդէն։

Շարականը առնուած իր դասական ձեւով եւ ըմբռնումով, կամ նկատուած իբր հոգեւոր երգ՝ սրբազան բանաստեղծութիւն մըն է, ուր տարրերը այլազան են, սակայն կը կեդրոնանան հիմնապէս աստուածայինին եւ մարդկայինին դէմ՝ յանդիման նկատողութեան մէջ։ Մարդը՝ ինկած, թշուառ, մեղքին բացած վէրքին գիտակից, կը հիւսէ հոգեկան պաղատանք, կ'արծարծէ սիրոյ եւ յոյսի տենչանքներ առ Այն՝ որ տէրն է ամէն ինչի, արարիչ եւ փրկիչ։ Մարդուն ապաւինութեան ձայնը՝ երկնային զօրութեան ուղղուած՝ կը դառնայ երբեմն հզօր կանչ, որտի ուժգին աղաղակ, երբեմն լաց, միշտ կարօտ սիրտփանքի եւ շնորհքի երկնային ցօղին։

Շարականի բանաստեղծութիւնը կը գրկէ բովանդակ տիեզերքը՝ բնութիւնը, տարրերը, ամէն ինչ որ ելած է Ստեղծողին ձեռքէն՝ կը հպի իր քնարին լարերուն, եւ անոնցմէ ելածը՝ կ'ըլլայ երգը մարդկային սրտին եւ աստուածային մեծփայնելութեան, մարդկային խեղճութեան եւ աստուածային գոբութեան, մեղքի եւ շնորհի, շարունակութեան եւ բարութեան, դառնալով հիմնական զաղափարներու շուրջ՝ որ մարդուն ստեղծումէն մինչեւ փրկագործութեան եւ փառքի աստիճանները կը վերելակէ։ Գերադոյն եւ Բացարձակ իսկը, նախածնողաց յանցանքը «բարձող», այսինքն քնաջնջող հրաշք Սէրը՝ առարկան է բանաստեղծին տեւական հիացումին։

Շարականադիր Շնորհալիի մէջ անբաժան է բանաստեղծին ինքնութիւնը, որ տիրապետող տարր է իր արտադրութեան վրայ, հակառակ նախընթաց շրջաններուն՝ ուր թերեւս մտածութիւնը, դասական ծանրութիւնը գերակշիռ էին: Չենք սխալիր եթէ կոչենք զինքը հայ եկեղեցւոյ սոխակը: Առանց իրեն, մեր Շարակնոցը պիտի չլինար զուրկ իր ամէնէն գեղեցիկ էջերէն, ամէնէն զանազանեալ արմնար զուրկ իր ամէնէն գեղեցիկ էջերէն, բերանացի կամ գրաւոր, տայայտութիւններէն: Աւանդութիւնը, բերանացի կամ գրաւոր, Շնորհալիի անունին չուրջ կը խմբէ բազմաթիւ շարականներ ու երգեր, սակայն այսօր բանասիրութիւնը վստահօրէն կը փնտռէ ամուր եւ անհերքելի փաստեր՝ իրեն վերագրուածներու հայրութիւնը ճշտելու:

ՀԱՐԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ

Այսօր տակաւին, ութը դար ետքն ալ, չունինք բացարձակ ստու-
գութիւնը Շնորհալիի շարականներուն ամբողջականութեան: Եստ
բան գրուած է, կատարուած են շատ քննական փորձեր, սակայն
ցարդ քանի մը պատմիչներու եւ ցանկերու եւ նոյնիսկ իրարու հա-
կատող վկայութիւններու վրայ հաստատուած, անգոհացուցիչ հե-
տեւութիւններ ունինք ձեռքերնիս: Դժուարին են՝ միւս կողմէն՝ այս
ճշտումները, քանի որ կը պակսին վստահելի աղբիւրներ: Հարազա-

վերստին կու տայ ընդլայնումը, մանրամասնութիւններու շեշտումով եւ խորացումով գաղափարին: Այս արտայայտչական եղանակն ալ նմանապէս պահուած է: Յարգուած է նմանապէս յանկերգը կամ դարձը, որ մերթ սաղմոսի կցուող է, մերթ աղաչական խօսք մը, որ իր կրկնութեամբը կը նպաստէ երգին եղանակային միութեան: Այս- ուրեքնական տուններու գործածութիւնը գիւտը չէ Շնորհալիին. ատոր օրինակ են նախ «Անձիմֆ»ն ու «Անսկիգրն Բան», եւ նաեւ «Ապաւի- ցեցաք ի խաչ քո»ի Ա-Յ տունները, որոնց շարունակութիւնը ունին կարգ մը ձեռագիրներ:

Գրական արտայայտութեան ձեւերու փոխանցումներ Շնորհալիի մէջ՝ հիններու արուեստէն, ընդհանուր քննութեան մը մէջ հարկ է որ նկատի առնուին: Անժխտելի է այսպէս կառոյցքի հանգիստութիւն- նը «Անսկիգրն Բան» եւ «Անսառելի Բանդ»ի միջեւ, ինչպէս նաեւ շարադրութեան, հիւսուածքի եւ տուններէ ներս տողերու այբուրե- նական կարգաւորման մէջ:

Ազդեցութեան մը վրայ խորհիլ կու տայ Աւագ Ուրբաթի «Ար- ծաքսիրութեամբ»ի «Ուլ համբոյր նենգութեան, նշան եւ առիթ մա- հու» երկտողին թողած տպաւորութիւնը Շնորհալիի վրայ, որ փոխ կ'առնէ գրեթէ նոյն կազմը եւ շարադրութիւնը «Այսօր անմառ»ի հե- տեւեալ քառեակին մէջ:

«Յուզաս նենգաւ համբուրելով՝
առիթ մահու նըշան տալով,
փոխան սիրոյ զնա մատնելով,
չար ընդ բարւոյ վըճարելով:

Նոյնպէս դասական ու անյանդ սա տողերուն ստեղծագործու- թեան դիմաց՝ «Մերկացաւ յինքնէ զաստուածային սուրբ Հոգին եւ զգեցաւ զսատանայ որպէս հանդերձ արկաւ զիւրեաւ», որ մեծ եւ զգայուն անծանօթ բանաստեղծի մը գործն է, գաղափարին հեռա- ւոր մերձեցումով մը՝ Շնորհալիին կ'երգէ, նմանութեան յայտնի ար- ձագանգով:

«Ձոր առեալ եւ մերկացաւ
յաստուածային Հոգւոյն շնորհաց,
մատնեցաւ նախաչարին
ընդ մատնութեան վարդապետին»:

Նշելու է նաեւ «Պարգեւատում ամենեցուն»ի արձագանգը. այդ շարականը հակադրութիւններու տարափ մըն է, որոնցմէ մէկն է «արկողն զլոյս որպէս զօթոց, հաւանի պատիլ ի Յովսեփայ»:

Այս գաղափարը, ուր ազդեցիկ շեշտով մը անծանօթ բանաստեղ- ծը կը ներկայացնէ լոյսը՝ իբրեւ օթոց, նետուած ստեղծեալ իրերու

կամ քննութեան վրայ, Շնորհալի շրջած է եւ կը նկատէ լոյսը՝ որ- պէս քնական հանդերձը աստուածութեան. Գրիստոս՝ որ լոյս է, ռամիկ զինուորներէն ծաղրուելով՝ առած է վրան նախատինքի ըզ- դեստը: Գեղեցիկ շրջում մը՝ ուր դարձեալ կը զգանք հակադրական ձեւի գորութիւնը: Այս քանի մը անդրադարձութիւնները կու գան հաստատելու կապը ընդ մէջ հին շրջանի եւ նորի, որ բացուեցաւ Շնորհալիով:

ՇՆՈՐՀԱԼԻ ԴԱՐԱԿԱՆՆԵՐԸ ԻՐԵՆՅ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՁԱՅՆ

Շնորհալին հինին վրայ կը կառուցանէ Հայ Եկեղեցւոյ շարա- կաններու նոր ճարտարապետութիւնը՝ հոյակապ եւ համակուած նոր շունչով: Նոր կորովով առոյգացած այս սրբազան բանաստեղծու- թեան մէջ՝ մեծագոյն մասը կը կազմէ հոգեւոր երգի բաժինը, ապա կու գան սուրբերու նուիրուած շարականները, իսկ փոքրագոյն մա- սը կը կազմեն տէրուական յիշատակներու շարականները:

Սկսելով վերջիններէն՝ տեսնենք նախ անոնց դաղափարային խորքն ու բովանդակութիւնը: Երեք են զխաւորապէս նիւթերը այս բաժինին. Քառասնորդաց կիրակիները, Վարդապետի Բ. եւ Գ. օրե- րը, Հոգեգալստեան Բ. Գ. Դ. Ե. օրերը: Անոնք ամբողջական են ի- րենց կազմով եւ կանոնի մասերով:

Ծարականները զխաւորապէս բաժնուած են Գիշերային եւ Առա- լօտեան ժամերու վրայ: «Օրհնութիւն»ը գիշերային ժամու հիմնա- կան շարականն է, բովանդակող տօնախմբութեան խորհուրդին կամ յիշատակին տիրական գաղափարները. «Հարց»ը՝ որուն կը հետեւին «Մեծացուցէ», «Ողորմեա», «Տէր յերկնից», հետզհետէ կ'ընդլայ- նեն հիմնական գաղափարները: «Մանկունք» (Առաւօտեան ժամուն) եւ «Համբարձի» (Երեկոյեան ժամուն) կ'անդրադառնան համառօտ կերպով խորհուրդին: Մնացած ժամերուն վրայ ցրուած են հոգեւոր երգերը⁸:

8. Այս երգերը ծիսականօրէն իրենց ծագումը ունին երբայական հին երգերէն կամ Սաղմոսներէն: Օրհնութիւն՝ Մովսէսի երգէն «Օրհնեսցուք զՏէր, զի փա- րօք է փառաւորեալ»՝ կ'առնէ իր ներշնչումը: Հարցը՝ Բարեւոյնի երեք մանուկ- ներու օրհներգութիւնն է հնոցին մէջ, ուր անոնք կրակէ բոցերուն մէջ անգամ չէին մոռնար Աստուածը իրենց հայրերուն: Մեծացուցէ՝ Ս. Աստուածածնի զոհարանական երգն է՝ այս կարգի շարականներուն մէջ Ս. Կոյսը առարկայ է ամէնէն քնքուշ եւ բանաստեղծօրէն ամէնէն գեղազանց արտայայտութիւններու:

«Ոլորմեա»ն դարձ մըն է կրկին գլխաւոր պատկերին, արդար դատաւորին՝ որ մեր բնութեան մէջ հաստատուած միտքն է, արդարութեամբ եւ իրաւունքով կատարելու դատաստանը հոգւոյն եւ մարմնոյն յարաբերութիւններուն, որպէսզի հոգին մեղքով վերստին չհեռանայ իր երկնաւոր փեսայէն, եւ զօրանայ այնպէս՝ որ կարենայ մարմնոյն կամքը հնազանդեցնել, եւ ապրիլ միշտ անոր հետ՝ որ մեռցուց մեղքը իր մահով եւ վերահաստատեց արդարութիւնը։ Ասկէ կ'անցնի «Տէր յերկնից»ի մէջ մշակելու քրիստոսաբանական հիմնական դադափարը, որ արդէն նախապէս ալ շօշափած էր անցողակի, «նոր մարդու» եւ «հին մարդու» հակադրութիւնը. խաչի վրայ մեռած հինին տեղ՝ ծնաւ նորը, Քրիստոսի կենդանարար յարութեամբ կոչուած անմահութեան։

Զ. Եւ վերջին կիրակին, նուիրուած է Փրկչին կրկնակի դալըստեան, առաջինը՝ մարդեղութեամբ եւ խոնարհ յայտնութեամբ երկրի վրայ, երկրորդը՝ սոսկալի վերադարձով, աշխարհի կատարածին, դատելու համար մարդկութիւնը: Նիւթը իսկապէս վսեմօրէն կը պատշաճի իբրեւ փակում քառասնորդական ծոմապահութեան եւ ապաշխարութեան օրերուն: «Օրհնութիւնը» («Որ զխորհուրդ քալըստեանդ») զեղեցիկ հիւսուածք մըն է մարգարէական ներշնչումներու, կոչումներու եւ խորհրդածութիւններու: Ահեղ է վերջին դատաստանի տեսարանը՝ զոր կը գծէ մեր երեւակայութեան առջեւ, երբ պիտի յայտնուի Աստուած կրակ թափելով առջեւէն, սաստով, խիստ ու անաչառ դատաւորի նման՝ բազմելով ամպերու վրայ, երբ պիտի հնչեն հրեշտակներուն փողերը, եւ պիտի համախմբուի բովանդակ մարդկութիւնը՝ իր դիմաց:

Այդ ահաւոր պահուն, արդարադատ դատաւորի կողքին բազմած է՝ երկրէն երկինք հարս ընծայուած միակ բարեխօսը, որուն մայրենի քաղցրութեան կը դիմէ բանաստեղծը, արտասուագին կոչով մը՝ որ դարերու կոչը եղած է մեղաւոր հոգիներէն առ Տիրամայրը գթած:

Գալուստաներու յիշատակումին մէջ՝ Շնորհալի ճարտարօրէն միացուցած է Երուսաղէմ մուտքի երգն ալ, «Օրհնութեան» երկրորդ մասին մէջ, որուն աւետիսը տուած էր Զաքարիա մարգարէն, կապելով այսպէս իրարու Զ. կիրակին՝ արմաւենիներու եւ ձիթենիներու կիրակիին, Մաղկազարդին:

Ծաղկագարդի հանդիսաւորութեան մէջ իրեն վերագրուած չա-
րականը «Հարցոյն է, (Ո՞ր ի քերովքէական աթոռ»): Սակայն, նո-
րութիւն չունի՝ որպէս գաղափար եւ արտայայտութիւն. կը կըրկ-
նուին նոյն պատկերները եւ մտածութիւնները «Որ վերօրինիս» «Օրհ-

1974

Աւագ շաբթուան շարականները հին են ըստ աւանդութեան, վերաբերուած Ս. Սահակ Հայրապետին: Ամբողջ շաբթուան մէջ Շնորհալիի բաժինը «Այսօր ամնառ», «Նորոգող տիեզերաց» շաբթերուն եւ «Այսօր ի կատարումն» շարականին մէջ միայն կը կայանայ. համեստ բաժին մը, որ սակայն Աւագ Ուրբաթի տօնակատարութեան տուած է ջերմեռանդ օծութիւն, փրկագործութեան խորհուրդին անսահման խորութիւններուն մէջ մխրճելով հայ ժողովուրդին սիրտը. էջեր՝ խորութիւններուն մէջ մխրճելով հայ ժողովուրդին սիրտը. էջեր՝ դարերով ապրած են, բերելով մեզի աստուածայէր եւ խորոնք՝ դարերով ապրած են, բերելով մեզի աստուածայէր եւ խորազգաց եկեղեցւոյ վարդապետի մը տաք շունչը: «Այսօր ի կատարումն» ի գաղափարային բովանդակութիւնը մասամբ կը վերապրի Աւագ Ուրբաթի գիշերային հոգեւոր երգերուն մէջ, տարբերելով աւագ Ուրբաթի գիշերային հոգեւոր երգերուն մէջ, տարբերելով աւանդմէ իր արտայայտութեան եղանակին եւ շարականական շարադրութեամբ:

«Այսօր ամառ» եւ «Նորոգող տիեզերաց» շարականները պիտի դարձնենք առանձին խորհրդածութեան նիւթ: Հոս, հարկ կը զգանք անդրադարձութիւն մը կատարել Աւագ Շաբաթ օրունան» «Կեցեցանիմ յաւիտեմից» եւ Կուսածիմ մարմնով» տուններուն Շնորհալիի վերադրելու հարցին շուրջ: Զեռագրական փաստ չունինք. լոկ ականդութեան վրայ հաստատուած ենթադրութիւն մըն է: Գաղափարային ուրոշ նմանութիւն մը կարելի է հիմը համարիլ այս ենթադրութեան. Շնորհալիի սա տողերը կրնան Ս. Սահակի շարականին հեռանոր յիշողութիւն մ'ըլլալ, եւ մատնանշել մեզի «Օրհնութեան» երկրորդ եւ երրորդ խումբերուն հեղինակը.

«Որ կնքեցար դու մատանեալ
դասուք լուծեալ քահանային,
դանձդ կենաց անմահութեան,
ծածկեալ եղար ի սրբա երկրի»:

Որ ի դասուց հոգեղինաց
ահիւ պատուիս յիմանալին,
նոյն պահեցար ի զինուորաց,
պահպան անքուն Իսրայէլին»:

(ՅԻԱԾԼԱ ՈՐԴԻ, ՎՃԱՄ. 1928, էջ 137)

9. Հմտ. ԱԻՆՏԻԳԵՆ Կ. Գ., Բացարձուքիւմ շարականաց, Վենետիկ, 1814, էջ 210-216:

